Տ. ԻՍԱՀԱԿ ՎՐԴ. ՊՈՂՈՍՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

ԱՋԱՏ ԿԱՄՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Աստվածաշունչը վկայում է, որ մարդն արարչության պսակն է, եւ որպես աստվածային ստեղծագործության գագաթնակետ ու նպատակ՝ բարիքի (երանության) է հասնում միայն Աստծու հետ միության եւ միավորության մեջ։ Քրիստոնեական վարդապետության համաձայն՝ մարդն օժտված է ազատ կամքով, իսկ նրա արարումն ի սկզբանե որոշակի նպատակով ծրագրված իրողություն է՝ այնքան կարեւոր ու «անմատչելի», որքան ողջ արարչագործությունը։ Որեւէ «պակասություն» չունեցող ամենաբարի Աստված չկամեցավ «միայն վայելել յիւրական ճոխութիւնն, այլ յաղթահարեալ ի մարդասէր կամաց իւրոց, արար զմարդն ի պատկեր իւրոյ եւ բարերարութեանէն առնելով զնա հաղորդս անպատում պարգեւացն»[1]։ *Աստվածաշունչ մատյանի առաջին իսկ տողերից միանգամայն հստակ երեւում է, որ արարչագործության մեջ ամենայն ընթացք ու զարգացում իրականանում կամ տեղի է ունենում Աստծու ներգործությամբ (հմմտ. Իմաստ. Զ. 8), միմիայն ու բացառապես Նրա կամքով (հմմտ. Ծննդ. Ա. 9, 11, 14, 22, 26, Բ. 6–7, Գ. 14, 19, Դ. 15, Զ. 3, 7)։ Արարչագործության դրվագում յոթ անգամ հանդիպում ենք* «Աստուած ասաց....» *եւ իբրեւ հետեւանք կամ շարունակություն՝* «...եւ այդպէս եղաւ...» *խոսքերին։ Սուրբգրային այս հատվածում ընդգծվում է Տիրոջ խոսքի բացարձակ զորությունը (հմմտ. Ես. Ծե. 10–11, Երեմ. ԻԳ. 30)։ Աշխարհի պատմական ընթացքը կարգավորվում է գերբնական ներգործությամբ եւ ըստ Աստծու հաստատած անշեղելի օրենքի (հմմտ. Բ. Օր. Ը. 3)։ Այսու, Աստծու արարչական ներգործության արդյունքը տեսնելով (հմմտ. Ծննդ. Ա. 15–18)՝ սքանչանում ենք (հմմտ. Իմաստ. ԺԳ. 5)։ Փորձենք ճանաչել այդ օրենքների*

[1] Ս. Յովհան Որոտնեցի, *Մեկնողական-իմաստասիրական ճառեր, քնն. բնագրերը, առաջ. եւ ծանոթ.՝ Ա. Մինասեանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 283։*

աղբյուրը եւ արարչական ներգործության զորությունը (հմմտ. Ծննդ. Ա. 28, Բ. 15, 21, 24, Գ. 16)[2]*։ Ս. Ներսես Շնորհալին գրում է.* «Զհանդուրժեալ բնութեամբ բաւոյն ունել միայն զանճառ բարին, այլ ստեղծեալ մարդ յիւր պատկերին»[3]*։ Աշխարհի կանոնավոր ընթացքը, ներդաշնակությունը պայմանավորված են աստվածային կամքի «անշեղ օրենքով» (հմմտ. Ես. ԽԶ. 9–10)*[4]*, «արարչական ներգործությամբ» (հմմտ. Դան. Գ. 20–22) եւ աստիճանակարգությամբ (հմմտ. Ծննդ. Ա. 1, 5, 8, 13)։ Ըստ Եզնիկ Կողբացու՝* «Զգոյր ինչ ժամանակակից Աստուծոյ, եւ ոչ նիւթ ինչ՝ ուստի առեալ զարարածս կազմիցէ. այլ ինքն է ամենայն բնութեանց Արարիչ. եւ ոչ միայն կերպարանաց կազմիչ, եւ ոչ էութեան էականաց իրիք խառնիչ, այլ գոյանալոյ գոյացելոցն գոյարար....»[5]*։*

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու աստվածաբանության մեջ եւս կարեւոր տեղ է զբաղեցնում մարդու մասին ուսմունքը՝ մարդաբանությունը (անթրոպոլոգիա)։ Նշենք նաեւ, որ մարդաբանությունը որոշակի տեղ ունի պլատոնյան հետեւորդ Դավիթ Անհաղթի փիլիսոփայության մեջ։ Ավելին՝ նրա փիլիսոփայությունը մարդակենտրոն է։ Համաձայն Դավիթ Անհաղթի՝ փիլիսոփայության ուղղվածությունն առհասարակ մարդաբանական է, քանի որ այն երբեւէ չի կտրվում մարդուց՝ անձից[6]*։*

Քրիստոնեական ընկալմամբ՝ Աստված եւ արարիչ է, եւ օրենսդիր, եւ սահմանադիր։ Արարչագործության մեջ ամեն բան կատարյալ ներդաշնակված ու կարգավորված է՝ «...ո՛չ խառնակս ինչ եւ շփոթեալս եթող զեղեալսն.... Եւ կացոյց զնախախնամութիւնն կառավար եւ պահապան կալ իւրաքանչիւր բնութիւնսն, ըստ այն սահման եդ որ ոչ անցանեն»[7]*։ Օրինակ՝ հրեշտակների բնական սահմանն է (պարտականություն) Աստծուն հնազանդվելը եւ մարդուն ծառայելը, երկնքի սահմանն է մշտական*

---

[2] *Հմմտ.* Ա. Տեր-Միքելյան, *Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, արեւելահայ. փոխադր.՝ Ս. Բուլթյանի, ծանոթ.՝ Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 100։*

[3] *«Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ», Երուսաղէմ, 2003, «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից առաւօտու ժամուն, որ կատարի ի դէմս Որդւոյն Աստուծոյ, որ երեւեցաւ իւղաբերիցն», «Երգ տեառն Ներսիսի վասն վեցերորդի աւուր արարչութեանն, եւ վասն վեցերորդի դարուն, եւ ի խաչելութիւնն Քրիստոսի» (Ուրբաթ), էջ 353։*

[4] *«Աշխարհ յառաջ, քան զլինելն իւր գոյր ի նախագաղափար տեսութիւնն Աստուծոյ». տե՛ս «Եղիշէի Արարածոց մեկնութիւնը», աշխ.՝ Լ. Խաչիկեանի, Երեւան, 1992, էջ 369։*

[5] *Տե՛ս* Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց, թարգմ., ներաթ. եւ ծանոթ.՝ Ա. Աբրահամեանի, Երեւան, 1970, էջ 239։*

[6] *Տե՛ս* Ս. Պետրոսյան, *Դավիթ Անհաղթի փիլիսոփայության մարդաբանական ուղղվածությունը, Ս. Էջմիածին, 2017։*

[7] Յովհաննէս Պլուզ Երզնկացի, *Նորին ի Լ.Դ. սաղմոսն, ՄՄ ձեռ. Համ 2173, էջ 168բ։*

շարժումը, երկրինը՝ հաստատունությունը եւ այլն։ Արարչագործությանը եւ տիեզերական աստիճանակարգությանը ներհատուկ է խորհրդանշական բովանդակությունը։ Աստծու եւ արարածի միջեւ գոյություն ունեն ինչպես սկզբունքային տարբերություն, այնպես եւ նմանություն՝ «Արարիչն եւ արարած առընչականք են միմեանց, զի Արարիչն զարարածս ցուցանէ, եւ արարածս զԱրարիչն»[8]*։ Աստվածային սիրո առաջին դրսեւորումն արարչագործությունն է։ Աստծու արարչության «պատճառը» Նրա բացարձակ սեր լինելն է[9]։ Արարչագործությունը մի կողմից վկայում է Արարչի բացարձակ ու անպարագրելի հատկանիշների, մասնավորապես սիրո մասին (հմմտ. Իմաստ. ԺԱ. 25, Հովհ. Գ. 16), իսկ մյուս կողմից՝ բացահայտելով այդ սերը՝ մեզ մղում է երախտագետ լինելու, գիտակցական հավատքով ըմբռնելու մեր «պաշտոնը» եւ բաժնեկից լինելու Տիրոջ փառքին (հմմտ. Հռոմ. Ա. 20)։ Արարչագործությունը բազմաթիվ խորհուրդներ ունի, եւ նրա զանազանությունն ու գեղեցկությունը բացահայտում են Աստծու կատարելությունն ու սքանչելիքները։ Տիեզերքը, խորհրդաբանական իմաստով, դիտարկվում է իբրեւ գիրք՝ «աստվածային աներեւույթ աշխարհի խորհրդանշան»։ Միայն մարդն ու հրեշտակների դասն են, որ բանականությամբ նման են Աստծուն։ Մարդը միայն հոգի կամ միայն մարմին չէ, այլ ոգեղեն մարմնով անձ. նա պարզապես որեւէ սեռի պատկանող էակ չէ եւ ոչ էլ սոսկ մի անհատ (individum), այլ անփոխարինելի ու անկրկնելի բացարձակություն է՝ ինքնագիտակցության եւ ազատության ունակությամբ օժտված, որն ունի իր «ես»-ը[10]։*

Հարկ է նշել, որ քրիստոնեական մարդաբանության առանցքը «...մարդու՝ Աստծու պատկերով եւ նմանությամբ ստեղծված լինելու իրողությունն է։ Առավել տարածված տեսակետի համաձայն՝ Աստծու պատկերը մարդկային հոգին է, ի մասնավորի իր ամենաբարձր դրսեւորմամբ՝ միտք, բանականություն»[11]։ Քրիստոնեական մարդաբանության ճիշտ

---

[8] Առաքել Սիւնեցի, *Լուծմունք յաղագս Սահմանացս Դաւթի Անյաղթի փիլիսոփայի, «Գիրք Սահմանաց սրբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Հայոց իմաստասիրի», Մադրաս, 1797, էջ 371. հմմտ. «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն» (այսուհետեւ՝ «Գիրք հարցմանց»), Երուսաղէմ, 1993, էջ 156–157, 179–180։*

[9] *Տե՛ս* Ա. Տեր-Մելքելեան, *Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, էջ 91։*

[10] *Տե՛ս* Յակոբ Արք. Գլնճեան, *Մեկնութիւն Արարածոց. Կոհելէթ կամ գիրք Ժողովողի, Երեւան, 2017, էջ 238։*

[11] *Առավել մանրամասն տե՛ս* Մեսրոպ Վրդ. Պարսամեան, *Լինել Աստուած. Մարդու աստվածացման եռաստիճան ճանապարհն ըստ Ներսես Շնորհալու վարդապետության, էջ 80–81։*

ընկալման համար ուշագրավ է Ս. Բարսեղ Կեսարացու այն միտքը, համաձայն որի՝ Աստված մարդուն ստեղծեց որպես կենդանի էակ, որ կոչված էր «աստված» լինելու։ Աստծու եւ մարդու կամքերի մեկտեղումը, որով վերջինս հարատեւում էր դրախտում, ընդհատվեց գայթակղության հետեւանքով գլուխ բարձրացրած հավակնոտ անհնազանդությամբ ու հպարտությամբ։ Ադամորդու գործած մեղքի պատճառով նրա վրա ծանրացած անեծքի պարտամուրհակը պատռվում է Աստծու տիեզերարծարծ կամքով եւ անսահման ողորմածությամբ։ Այն դրսեւորվում է Բանի մարմնավորմամբ եւ փրկագործությամբ, ինչպես որ «Ժամակարգութեան մեկնութեան» մեջ բացատրում է Խոսրով Անձեւացին՝ «Գթածաբար զմեռս զգեցաւ (Որդին) մարմին կամաւ Հօր եւ հաճութեամբ Սուրբ Հոգւոյն...»[12]։ *Աստված, մարդուն Իր պատկերը շնորհելով, «բարեհակում» ձիրք է պարգեւել, որ տիրի երկրին. մարդն էլ պետք է ձգտի լինել այն, ինչ Աստված է կանխորոշել[13] (հմմտ. Ծնն. Բ. 19)։ Ըստ տրամաբանության՝ տարօրինակ է, որ նշյալ կոչումը նվաճելու համար (Աստծու կողմից մարդուն տրված ազատ կամքի արդարացի գործադրումով) հարկ էր հրաժարվել դրանից։ Վերոհիշյալը տեղի չունեցավ եւ խաթարվեց մեղանչումի հետեւանքով։ Մեղքից ազատվելու եւ «աստվածանալու» համար անհրաժեշտ է աստվածային եւ մարդկային կամքերի լիակատար մեկտեղում[14]։ Ըստ այսմ՝ Աստծուն ծառայելով է, որ տիրում ենք աշխարհին։ Եւ ուրեմն՝ մարդը ազատ կամքի շնորհիվ մշտապես ընտրության հնարավորություն ունի՝ ընտրելու բարին կամ կորցնելու իր արժանապատվությունը, ինչպես ներկայացնում է երանելի Պողոս առաքյալը (հմմտ. Գաղ. Ե. 13)։*

Ըստ Եղիշե վարդապետի՝ մարդը երկնայինի ու երկրայինի գեղեցիկ խառնվածք է՝ միավորված Աստծու ստեղծագործ իմաստությամբ. պարզը եւ առավել թեթեւը երկնքից են, ծանրը եւ բաղադրյալը՝ երկրից։

---

[12] *«Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց», աշխ.՝ Մ. Գրիգորեան Զմիւռնացւոյ, Մոսկուա, 1850, էջ 175–176. հմմտ.* Յ. Քէօսէեան, *Հայ Եկեղեցու աստուածաբանութիւնը շարականներում եւ տաղերում, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, 1993, Դ., էջ 109–112։*

[13] «Զի ի սկզբան մարդն ցանկացաւ աստուածանալ եւ անդ ոչ հասաւ, իսկ Արարիչն եկեալ մարդացաւ, վասն այնորիկ մարդն աստուածացաւ» *(«Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Ա., ի Վենետիկ, 1837, էջ 327)։*

[14] *Տե՛ս* Յ. Քէօսէեան, *Հայ Եկեղեցու աստուածաբանութիւնը շարականներում եւ տաղերում, էջ 109–112։* «Մարդն ստեղծվել է Աստծու կամքով.... սակայն Աստծու սերը մարդու նկատմամբ այնքան մեծ է, որ Նա չի կարող բռնանալ վերջինիս վրա...» *(տե՛ս* В. Лосский, Догматическое богословие, «Богословские труды», сб. *8,* Москва, *1972, էջ 157)։*

Նյութական այլ տեսակների բնությունը ճանաչում ենք որպես ստորադաս եւ «անհանճար»[15]։ Պողոս առաքյալն ասում է. «Փառաւո՛ր արարէ զԱստուած ի մարմինս ձեր եւ յոգիս, որ է Աստուծոյ» *(Ա. Կորնթ. Զ. 20)։ Այս պատվերը կատարելու համար պետք է ձգտենք առ Քրիստոս, որի մեջ է Բանի եւ մարդկության ճշմարիտ միությունը[16]։ Այլ խոսքով՝ շնորհիվ իր բազմախորհուրդ սիրո եւ անսպառ ողորմության՝ Աստված կամեցավ հաստատել սիրո արքայություն եւ Իր հայտնությունը պարգեւել Իր պատկերն ու նմանությունը կրող արարածին[17]։*

Մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչն ասում է. «Աստուծոյ սէրը մեր նկատմամբ յայտնւում է նրանով, որ Նա մե՛զ համար ստեղծեց երկինքն ու երկիրը...»[18], *բոլոր արարածները Նրանով են կերտվել եւ բովանդակություն ստացել (հմմտ. Հովհ. ԺԷ. 21)։ Համաձայն Ա. Տեր-Միքելյանի աշխատության՝ մարդը, արարված լինելով Աստծու պատկերով, բնականաբար, իր հոգով «ծագման կախումն» ունի Աստծուց, ու նրա խնդրանքն էլ առ Աստված է, ինչպես եւ երանությունն է Նրա հետ (հմմտ. Մատթ. Ժ. 28, Ա. Կորնթ. Ե. 3, Զ. 20, Է. 34)։ Մարդ արարածի երկրային կյանքն Աստուծով է կյանք, եւ նրա բոլոր նպատակների նպատակը Տիրոջ արքայությունն է[19]։ «Արասցուք մարդ ըստ պատկերի Մերում եւ ըստ նմանութեան...» (Ծննդ. Ա. 26) սուրբգրային տեղին ցույց է տալիս աստվածային Անձերի միասնական խորհրդակցությունը՝ արարելու մարդուն։ Մարդն արարվում է Աստծու պատկերով եւ նմանությամբ. նա մեծարվում է գերագույն փառքով՝ որպես արարչության պսակ։ Իր արարումով մարդը դրվում է նախախնամական եւ շնորհական միության մեջ իր Սկզբնապատճառի հետ[20]։ Ըստ Եզնիկ Կողբացու՝ Աստված ամեն բան արարել է մարդու համար՝* «...նախ զտունն, եւ ապա զտնակալն.... նախ

---

[15] *Բնագիրը տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրութիւնք ըստ ընտրելագոյն ընթերցուածոց գրչագրաց», ի Վենետիկ, 1859։*

[16] *Տե՛ս* Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց, էջ 93–95. հմմտ.* Ա. Տեր-Միքելյան, *Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, էջ 106, 107։*

[17] *Տե՛ս* Ս. Գրիգոր Լուսաւորիչ, *Յաճախապատում ճառք, Վենետիկ, 1954, էջ 13։* «Մարդն է անմահ Աստուծոյ անմահ պատկերը» *(հմմտ. Ծննդ. Բ. 7, Ես. Ծէ. 16. տե՛ս* Սուրբ Եղիշե Վարդապետ, *Աստվածաբանական երկեր, Ս. Էջմիածին, 2007, էջ 222, 225), կամ՝* «...Աստուած միայն մարդասէր եւ մարդ՝ միայն աստուածասէր.... Աստուած՝ մարդոյ եւ մարդ՝ Աստուծոյ...» *(«Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրութիւնք ըստ ընտրելագոյն ընթերցուածոց գրչագրաց», էջ 293, 320)։*

[18] *Տե՛ս* Ս. Գրիգոր Լուսաւորիչ, *Յաճախապատում ճառք, էջ 13։*

[19] *Տե՛ս* Ա. Տեր-Միքելյան, *Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, էջ 105, 109։*

[20] *Հմմտ. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 263–264։*

զծառայսն, եւ ապա զտէրն» *սկզբունքով, որպեսզի վերջինս, վայելելով աշխարհի բարիքները, փառավորի Աստծուն՝* «...հայեցեալ ընդ նոսա (թէ՛ ջուր, թէ՛ հուր, թէ՛ երկիր, թէ՛ օդ....)՝ փառաւորեմք զԿարգիչն նոցա.... զի մեզ ի պէտս են...»[21]:

*Արարաչագործության վերջում, իբրեւ «սքանչելիքների բարձրակետ», «արարչագործության նպատակ» ու «արարչական կամքի միջնորդ», Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով եւ նմանությամբ: Մարդու «աստվածացումը» իրականանում է Աստծու Միածին Որդու մարդեղությամբ՝ շնորհի միջոցով, քանզի Աստվածորդու մարդեղացմամբ «վայրէջքի» (*κατάβασις*) ճանապարհը հնարավոր է դարձնում մարդու «վերելքի» (*ανάβασις*) ուղին: Այս առումով կարեւորագույն տեղ է զբաղեցնում Քրիստոսի մարմնին եւ արյանը հաղորդվելը՝ Ս. Հաղորդությունը, որի միջոցով մարդը «համամարմին» է դառնում մարմնացյալ Բանի աստվածացած մարմնին*[22]:

Ս. Գրիգոր Նարեկացին միայն չի սգում մարդկային արատների ու մեղանչումների համար, այլ ցույց է տալիս դրանցից ազատագրման ուղին: Ըստ նրա՝ բարոյական ինչպիսի անկյալ վիճակում էլ հայտնված լինի մարդը, կարող է վերափոխվել, նորոգվել՝ հագնելով Քրիստոսի տված նոր շապիկը[23]: *Աստվածաշունչ մատյանում՝ Ծննդոց Ա. 27-ում, տեսնում ենք, թե ինչպես Ադամն ու Եւան, գործելով առաջին մեղքը, կորցրին իրենց աստվածանմանությունը, սակայն նույն Ծննդոց Ե. 24-ում Ենովքին եւ Դ. Թագ. Բ. 11—12-ում Եղիային շնորհվում է Աստծու մոտ բարձրանալու հնարավորություն*[24]:

Հրեական մտածողությամբ՝ Թորայի իմացությունը եւ գործառությունը մարդուն դարձնում էին հրեշտակային կամ աստվածային: Օրենքը համարվում էր Աստծու ճառագայթման (էմանացիայի) արդյունք: Հետագայում՝ դեռ հինկտակարանյան ժամանակաշրջանում, արդեն իսկ զարգանում է մարդու կատարելագործման՝ «աստվածացման» գաղափարը[25]:

---

[21] *Տե՛ս «Եղնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց» ի Վենետիկ, 1826, էջ 51 (ծանոթ.). հմմտ. էջ 14, 75, 147, 157, 239:*

[22] *Տե՛ս* Մ. ՀաՅՈՒՆԻ, *Նարեկեան որոնումներ, Պէյրութ, 2007, էջ 86:*

[23] *Տե՛ս* Տ. Հեթումի քՀն. Թարվերդեան, *Մարդու «աստվածացման» ուղին ըստ Ս. Գրիգոր Նարեկացու, «Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք», 2014, էջ 114—115. հմմտ.* Լ. ԳեՒՈՐԳՅԱՆ, *Նարեկյան մտորումներ, Երեւան, 1984, էջ 86:*

[24] *Հմմտ.* Մեսրոպ ԱՐՔ. Պարսամեան, *նշ. աշխ., էջ 21:*

[25] *Տե՛ս* Թ. Տասնապետեան, *Գրիգոր Նարեկացիի Ողբերգութեան մատեանը, Անթիլիաս, 1993, էջ 56:*

Քրիստոնեական Եկեղեցու հայրերի երկերում, սակայն, «աստվածացման» գաղափարի զարգացման համար հիմք են ծառայում հատկապես սաղմոսերգուի հետեւյալ խոսքերը. «Ես ասացի, թէ աստուածք իցէք, կամ որդիք Բարձրելոյ ամենեքեան» *(Սաղմ. ՁԱ. 6), որոնք մեջ է բերում նաեւ մեր Տեր Հիսուս Քրիստոս (հմմտ. Հովհ. Ժ. 34)։ Ռաբբիական պատկերացումները եւս խարսխվում են սաղմոսի հիշյալ տողերի վրա։ Օրինակ՝ Մերքաբբայի խորհրդապաշտությունը, որը հիմնվում էր Աստծու կառքգահի եզեկիելյան տեսիլքի վրա (Եզեկ. Ա. 1–28), առաջադրում էր դեպի Աստված մտահամբարձումը Նրա պատվիրանների կատարման միջոցով։ Սաղմ. ՁԱ. 6-ում, ռաբբիական մեկնության համաձայն, «աստվածները» նրանք են, ովքեր անմահություն են ձեռք բերել Թորայի պատվիրաններին ու հրահանգներին հետեւելու շնորհիվ։ Հինկտակարանյան նահապետները՝ Աբրահամը, Իսահակը, Հակոբը, ըստ հրեական մտածողության, համարվել են սուրբ, հասարակ մարդկանցից հոգեւոր առումով վեր կանգնած անձինք, քանզի նրանք խոսել են Աստծու հետ։ Նահապետների շարքին է դասվում նաեւ Մովսեսը, որը Սինա լեռան վրա Աստծուց ստացավ տասնաբանյա պատվիրանները։ Մարգարեներից Եսային, Դանիելը, Եզեկիելը նույնպես առանձնահատուկ տեղ են գրավել հրեական ընկալումներում, քանի որ խոսել են Աստծու հետ եւ Նրա պատգամը փոխանցել ժողովրդին։ Նոր Կտակարանում եւս առկա են մարդու՝ Աստծու պատկերով ու նմանությամբ ստեղծված լինելու եւ մարդու «աստվածացման» գաղափարները։ Խոսելով մեր՝ Աստծու կողմից Քրիստոսով որդեգրման մասին՝ Պողոս առաքյալը զարգացնում է «աստվածացման» տեսությունը։ Նա իր թղթերում հաճախ է գործածում «Քրիստոսի մեջ», «Քրիստոս մեր մեջ», «Աստծու որդիներ» արտահայտությունները։ Նրա թղթերում բազմաթիվ վկայություններ կան նաեւ մտքի լուսավորության վերաբերյալ, որն իրագործվում է հիմնականում աղոթքի միջոցով[26]։ Նոր Կտակարանում մարդ–Աստված մերձեցումը հստակ ներկայացված է Ս. Հաղորդության խորհրդի հաստատման ժամանակ (Մատթ. ԻՁ. 17–30, Մարկ. ԺԴ. 12–26, Ղուկ. ԻԲ. 7–23, Հովհ. ԺԳ. 21–30, Ա. Կորնթ. ԺԱ. 23–25)։ Վերջին ընթրիքին Հիսուս Քրիստոսի հաստատած Հաղորդության խորհուրդը մարդ–Աստված միավորման, աստվածայինին հաղորդակից լինելու վերջնագիծն է այս աշխարհում.* «Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ եւ արբջիք զարիւն Նորա, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին

[26] *Հմմտ.* Մեսրոպ աբգ. Պարսամյան, *նշ. աշխ., էջ 21–28։*

Իմ եւ ըմպէ զարիւն Իմ, ունի զկեանս յաւիտենականս, եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում: Զի մարմին Իմ ճշմարիտ կերակուր է, եւ արիւն Իմ ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին Իմ եւ ըմպէ զարիւն Իմ, յիս բնակեսցէ, եւ ես ի նմա» *(Յովհ. Զ. 54–58)։ Առաքելական թղթերում ընդգծվում է Ս. Հաղորդության խորհրդի փրկչական եւ Քրիստոսի հետ մերձեցման նշանակությունը՝* «...իբրեւ զարդի ծնեալ մանկունս՝ խօսուն եւ անխարդախ կաթինն փափաքիցէք. զի նովաւ աճիցէք ի փրկութիւն, եթէ ճաշակիցէք՝ զի քաղցր է Տէր» *(Ա. Պետր. Բ. 2–3, հմմտ. Ա. Կորնթ. ԺԱ. 27–29)։ Մարդու «աստվածացման» գաղափարը, սկիզբ առնելով Պլատոնից եւ զարգացվելով նորպլատոնականների կողմից, ստանում է իր վերջնական տեսքը։ Նարեկյան «աստվածացման» վարդապետությունը լիովին տարբեր է նորպլատոնականների տեսությունից։ Նախ՝ Աստծու վերաբերյալ քրիստոնեական եւ նորպլատոնական պատկերացումներն ու ընկալումները բացարձակ տարբեր են, ապա՝ նորպլատոնականները մերժում են աշխարհը, մարմինը, ինչը բնորոշ չէ Նարեկյան դպրոցի ներկայացուցիչներին*[27]։

Խոսրով Անձեւացին իր «Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատության մեջ փորձում է բացահայտել ծիսապաշտամունքային արարողությունների, աղոթքների եւ սաղմոսների ներքին՝ հոգեւոր իմաստը։ Նշենք նաեւ, որ Անանիա ու Գրիգոր Նարեկացիներից առաջ Խոսրով Անձեւացին զարգացնում է «ներքին» եւ «արտաքին» գիտելիքների, հոգեւոր կենցաղավարության, մարդ–Աստված հաղորդության գաղափարները։ Վերջինս «Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատության մեջ նշում է՝ ծեսի իմաստը հասու չէ շատերին, ուստի հարկ է համարում գրել ժամակարգության մեկնությունը՝ ցույց տալով, որ առանց եկեղեցական արարողության ներքին կողմը հասկանալու՝ հավատացյալը չի կարող հաղորդվել Աստծուն։ Հեղինակը եկեղեցական արարողակարգի, հասարակաց պահքի ու պարտավորությունների հետ մատնանշում է նաեւ փրկության անհատական ուղին, հոգեւոր խորհուրդը, ներքին ծեսը, մարդ–Աստված հաղորդությանը հասնելու անմիջնորդ, ներանձնական ճանապարհը[28]։ *Մարդու աստվածահաղորդության, աստվածատեսության եւ աստվածացման գաղափարներն ուրույն ձեւակերպում ունեն*

---

[27] *Տե՛ս* Ասողիկ եպս. Արիստակեսեան, *Մեղքի եւ փրկության գաղափարը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» մեջ, Ս. Էջմիածին, 1996, էջ 41. հմմտ.* Մեսրոպ աբղ. Պարսամյան, *նշ. աշխ., էջ 55–61։*

[28] *Տե՛ս «Մեկնութիւն ժամակարգութեան արարեալ երանելւոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի», Կ. Պոլիս, 1840։*

խոսրով Անձեւացու երկում. «Եւ եթէ շատ օգտօղն եւ շատ թողութիւն գտօղն շատ խնդրի եւ շատ սէր պարտի, որպէս ասաց Տէրն երբեմն առ աշակերտսն, երբեմն՝ առ կինն պոռնիկ. ապա յայտ է թէ կարի առաւել պարտին ազգք մարդկան, քան զհրեշտակս երախտահատոյց լինել Աստուծոյ յոգն սիրոյն եւ յաճախ ներողութեան եւ անպատում առատ պարգեւացն...»[29]։

Ըստ Հր. Թամրազյանի՝ Անանիա Նարեկացին առավել խորացնում ու զարգացնում է արեւելաքրիստոնեական խորհրդապաշտության (միստիկայի) էական գաղափարները, ընդգծում ներքին ծեսի ու պաշտամունքի կարեւորությունը։ Բարոյական հայացքները նրա երկերում ներկայացված են առավել համակարգված՝ խրատագրքի տեսքով։ Նա փրկագործության առավել անհատական, ներանձնական ուղի է մատնանշում, իսկ համընդհանուր՝ «հասարակաց» ծեսի կողքին ընդգծում է «ներանձնական» ծեսի դերն ու նշանակությունը[30]։ Ս. Գրիգոր Նարեկացին մեղքերը համարում է կենդանական աշխարհից մարդկային մարմնի մեջ պահպանված հակումներ, որոնք միշտ էլ կարող են մարդու անկման պատճառ լինել։ Սուրբ Հոգու առկայությունը մարդու ամենազորեղ միջոցն է՝ պայքարելու մեղքերի դեմ։ Հոգին իր մեջ կրելով՝ մարդը կարող է բարոյապես կատարելագործվել։ Ս. Գրիգոր Նարեկացու Մատյանի «հերոսը» անվերջ որոնման մեջ գտնվող եւ կատարելության ձգտող մարդն է, որ պայքարում է հոգեւոր ներդաշնակության համար։ Տիեզերական վարդապետը ցանկանում է տեսնել մեղքերից ու արատներից մաքրագործված եւ «աստվածացող» մարդուն, որն այդ ճանապարհով պետք է միանա ու միաձուլվի «առաւելութիւն անհասանելի» աստվածային էությանը[31]։ Ս. Գրիգոր Նարեկացին կարծում է, որ միայն հոգեւոր կատարելագործման միջոցով կարելի է հասնել «աստվածացման»՝ նախակերպար ունենալով Քրիստոսին[32]։

Աստվածանալու՝ Աստծուն միանալու գաղափարն առանցքային տեղ է զբաղեցնում Ս. Ներսես Շնորհալու աստվածաբանության մեջ։ Ինչպես իրավամբ նկատում է Մեսրոպ վրդ. Պարսամյանը, Ս. Ներսես Շնորհալին «աստվածացման» խնդիրը դիտարկում է քրիստոսաբանական,

---

[29] *Անդ, էջ 6 (գ)։*

[30] *Տես* Հր. Թամրազյան, *Նարեկյան դպրոցը, Երեւան, 1999, էջ 215–216։*

[31] *Տես* Հով. Այվազյան, *Մարդու բարոյական կատարելագործման պրոբլեմը Նարեկացու եւ Դոստոեւսկու ստեղծագործություններում, «Էջմիածին», 2005, Բ.–Գ., էջ 161։*

[32] *Տես անդ, էջ 117–126. հմմտ.* Հր. Թամրազյան, *Նարեկյան դպրոցը, էջ 215–216.* Յակոբ Պատրիարք Նալեան, *Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 22–29։*

*հոգիաբանական (*pneumatologique*) եւ եկեղեցաբանական հարթություններում։ Մարդը, թեեւ արարված էր Արարչի պատկերով եւ նմանությամբ, սակայն չկարողացավ պահել Նրա հետ հարաբերությունը. նա երես թեքեց լույս Աստծուց եւ ընկավ խավարի մեջ։ Պատկերն ու նմանությունը աղավաղվեցին, եւ մարդու գերագույն նպատակը դարձավ իրեն անհասանելի։ Սակայն, Աստծու Որդու կողմից մարդկային բնության աստվածացման շնորհիվ մարդուն տրվեց հնարավորություն կրկին հասնելու աստվածանմանության եւ «աստվածացման», ինչն իրականացվում է Ս. Հոգու միջոցով՝ ապրելով եւ գործելով Եկեղեցում*[33]*։ Ըստ Ս. Գրիգոր Նարեկացու՝ Աստծու հետ հարաբերվելու լավագույն միջոցն աղոթքն է՝* «...դարձումն մտաց առ Աստուած՝ սուրբ եւ խոնարհ յօժարութեամբ»[34]*։ Մեղքի դեմ պայքարը, սակայն, առավել արդյունավետ է իրագործում Եկեղեցին, քանի որ մարմնական զգայարանները (որոնց միջոցով մեծ մասամբ նաեւ մեղքն է մուտք գործում) ուղղորդում է դեպի աստվածապաշտական գործողությունները՝ ծիսական արարողություններն ու աղոթքը։ Աստծու տան՝ Եկեղեցու առաքելությամբ է պայմանավորված աղոթքի բուն ընթացքը,* «...զի ոչ nf կարէ ելանել յերկինս, եթէ ոչ դրամբ այսորիկ նիւթաւորս Եկեղեցւոյ»[35]*։ Մայր Եկեղեցին հոգեւոր երկունքով՝ մկրտությամբ, ծնում է հավատացյալին, կերակրում Աստծու խոսքով, լուսավորում Սուրբ Երրորդության հավատքով, մաքրագործում ապաշխարությամբ եւ աստվածատուր պատվիրաններով, եկեղեցական խորհուրդներով, վարդապետությամբ, քարոզչությամբ՝ մարդուն նախապատրաստելով երկնային Հորը (կամ Սուրբ Երրորդությանը) ներկայացնելու համար*[36]*։*

Եւ ուրեմն՝ «մարդն Աստծու պատկերն» է ձեւակերպումը, մարդաբանական հիմնական ճշմարտությունն է, որով բնորոշվում է մարդու «աստվածացումը», կատարելության ձգտումը եւ անձնուրացության խնդիրը (հմմտ. Մատթ. Ե. 48), նաեւ քրիստոնեական բարոյական ողջ ուսմունքը։

«Անհատականություն», «արժանապատվություն», «ազատություն» հասկացությունները ներկայումս լայնորեն շրջանառվում են։ Նշենք, որ կախված ազատության բովանդակությունից եւ ընկալումից՝ մարդը կա՛մ

---

[33] *Տե՛ս* Մեսրոպ աբգ. Պարսամյան, *նշ. աշխ., էջ 91–92։*

[34] *Տե՛ս* Վ. Լալայան, *Աղոթքի խորհրդաբանությունը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» մեջ՝ ըստ պատրիարք Հակոբ Նալյանի, «Պատմաբանասիրական հանդես», 2014, թ. 2, էջ 110։*

[35] *Անդ, էջ 119։*

[36] *Տե՛ս անդ, էջ 123։*

կարող է նմանվել Աստծուն, կա՛մ խեղել իր աստվածաշնորհ պատկերը։ Անհատի գիտակցությունից եւ բարոյական արժեհամակարգից է կախված նրա ընտրությունը։ Մարդու իրավունքների ժամանակակից հայեցակարգի առանցքային հասկացությունը «մարդկային արժանապատվությունն» է, եւ այս կամ այն իրավունքն ու ազատությունը ձեւավորվում կամ հաստատվում են հենց այդ արժանապատվությունը պաշտպանելու ելակետային հիմնավորմամբ։

РЕЗЮМЕ

В статье из серии творений представлены восприятие и понимание свободы волеизъявления в христианской, в частности Армянской Церкви.

Среди других фундаментальных реальностей и потребностей рассматриваются такие термины и понятия, как «антропология», «индивидуальность», «достоинство», «автономия» и «человеческое достоинство», а также формулировка «Человек — образ Бога», значение сближения со Святым Причастием и Христом, идея обожествления, присоединения к Богу.

SUMMARY

The article presents the Christian perception of free will, in particular that of the Armenian Church.

Among other fundamental realities, the article considers such terms and concepts as «Anthropology», «Individuality», «Dignity», «Autonomy» and «Human Dignity», as well as the expression «Man — in the image of God», the meaning of taking the Holy Communion and reunion with Christ, the idea of deification, unity with God.